ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 53-Ա

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ ***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 12 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները դրույքաչափերը սահմանելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
2) Սարչապետ համայնքի ղեկավարի վարձատրության չափի մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
3) Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)
4) Սարչապետ համայնքի <<Պարտեզ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ծնողական վճարի չափը սահմանելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
5) Սարչապետ համայնքի <<Պարտեզ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
6) << Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)
8) Սարչապետ համայնքի սեփականության և նրա ենթակայության << Պարտեզ >> մանկապարտեզի գույքի հաշվառման փաստաթղթերի հաստատման մասին: (Զեկ. Ս.Բարսեղյան)
9) Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
10) Սարչապետ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ ստեղծելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
11) Սարչապետ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 54-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8- 14-րդ հոդվածներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 24-ի N 54 -Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

**1)** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

**ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝**

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ,**

**բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ,**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

**գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝**

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ** դրամ.

**2)** համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ.**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ.**

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ.**

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

**ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **11 000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15 000 /տասհինգ հազար/ ՀՀ դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **21 000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

**բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **11 000 /տասմնեկ հազար/ ՀՀ դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **21 000 /քսանմեկ հազար/ ՀՀ դրամ,**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ.**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

**10)** իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **350 /երեք հարյուր հիսուն/ՀՀ դրամ՝** մեկ քառակուսի մետրի համար.

**11)** համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ **40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ,**
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **70 000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ,**
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ,**
դ. խաղատների համար՝ **900 000 /ինը հարյուր հազար/ ՀՀ դրամ,**
ե. շահումով խաղերի համար՝ **300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ,**
զ. վիճակախաղերի համար՝ **100 000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

**12)** համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

**ա. հիմնական շինությունների ներսում՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000/երեք հազար/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **11 000 /տասնմեկ հազար/ ՀՀ դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **30 000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ.**

**բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝**

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1500 /մեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **7000 /յոթ հազար/ ՀՀ դրամ,**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10000 /տաս հազար/ ՀՀ դրամ,**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20000 /քսան հազար/ ՀՀ դրամ.**

**13)** ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500 /երեք հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

գ. սոցիալական գովազդի համար՝ **0 /զրո/ ՀՀ դրամ,**

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **1500 /հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ **375 /երեք հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ,**

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ **150 /մեկ հարյուր հիսուն/ ՀՀ դրամ.**

**14)** Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **100 000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

**15)** համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **10 000 /տասը հազար/ ՀՀ դրամ.**

**16)** համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ.**

**17)** համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **750 000 /յոթ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ,**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2 100 000 /երկու միլիոն մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ,**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3 000 000 /երեք միլիոն/ ՀՀ դրամ,**

**18)** համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:**

**19)** Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա.կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **19 000 /տասնինը հազար/ ՀՀ դրամ,**

բ.հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում **290 000 /երկու հարյուր իննսուն հազար/ ՀՀ դրամ:**

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 /երկու հազար / ՀՀ դրամ,**

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,**

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ **1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,**

6) Աճուրդի մասնակից չհամարվող անձանց համար մուտքի վճար՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

7) Աճուրդային փաթեթի տրամադրման համար փոխհատուցման վճար՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

8) Աճուրդային կանոնակարգի պատճեի տրամադրման համար փոխհատուցման վճար՝ **300 /երեք հարյուր/ ՀՀ դրամ,**

9) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝**1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ**,

10) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

ա.կենցաղային աղբի համար յուրաքանչյուր ամիս՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական **50 /հիսուն/ ՀՀ դրամ,**

11) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճար՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի՝

ա.առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ **50 /հիսուն/ ՀՀ դրամ,**

բ.հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայանների) հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ **40 /քառասուն/ ՀՀ դրամ,**

գ. Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ **19 /տասնինը / ՀՀ դրամ,**

դ.գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ **3 /երեք/ ՀՀ դրամ,** զորանոցների մասով՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ **8 /ութ/ ՀՀ դրամ,**

ե. արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ 1 քառակուսի մետր մակերեսի համար՝ **14 /տասնչորս/ ՀՀ դրամ**

12) շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ 1քմ մակերեսի համար յուրաքանչյուր ամիս՝ **50/հիսուն/ ՀՀ դրամ**,

13) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,**

14) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար՝ ոչ

կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի մեկ խորանարդ մետրի համար սահմանված դրույքաչափի 20 %-ի չափով՝ **600 / վեց հարյուր/ ՀՀ դրամ,**

15) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց **՝3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,**
16) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար փոխհատուցման վճար ՝ մեկ փաստաթղթի համար՝ **500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ**:

17) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

**ա.** համայնքի վարչական տարածքում կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ **500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ,**

**բ.** Ծննդօգնության համար

1.թեթև միջամտության համար՝ **1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ**
2.ծանր միջամտության համար՝ **5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ,**

**գ.** Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումների և արյունառումի կամ այլ նմուշառումի համար՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)՝
1.մանր կենդանու համար՝ **200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ,**
2.խոշոր կենդանու համար՝ **200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ,**

**դ.**Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ **1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,**

**ե.** Ախտահանության 1քմ-ի համար՝ **300 /երեք հարյուր/ ՀՀ դրամ,**

**զ.** Միջատազերծման 1քմ-ի համար՝ **200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ,**

**է.** Կրծողների ոչնչացման 1քմ-ի համար՝ **200 /երկու հարյուր/ ՀՀ դրամ,**

**ը.** Արեստական սերմնավորման համար՝
1. 1-ին անգամ **4000 /չորս հազար/ ՀՀ դրամ,**

2. 2-րդ անգամ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ,**

**թ.** Կենդանու հերձման համար՝
1.մանր կենդանու՝ **1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,**
2.խոշոր կենդանու՝ **3000 /երեք հազար/ ՀՀ դրամ,**

**ժ.** Կենդանու բուժման /կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից/ յուրաքանչյուր այցելության համար՝ **1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ,**

**ի.** Կենդանիների նախասպանդային զննման /կախված կենդանու տեսակից/ համար՝
1.մանր կենդանու՝**1000 /մեկ հազար/ ՀՀ դրամ**
2.խոշոր կենդանու՝ **2000 /երկու հազար/ ՀՀ դրամ:**

**Աշխատակազմի քարտուղար՝** **Անժելա Մարտիրոսյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 55-Ա

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով՝

**ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Սարչապետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատել 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 56-Ա

## ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի << Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 53-Ա որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարչապետ համայնքի ավագանու
2019թ. Դեկտեմբերի 24 -ի N 56-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

**Աշխատակիցների թվաքանակը՝ 34:**

| Հ/Հ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (սահմանվում է հաստիքային մեկ միավորի համար) |
|---|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 1. | Համայնքի ղեկավար | 1 | 350 000 |
| 2. | Վարչական ղեկավար/Նորաշեն/ | 1 | 145 000 |
| 3. | Վարչական ղեկավար | 4 | 130 000 |
| 4. | Վարչական ղեկավար/Ապավեն/ | 1 | 120 000 |
| 5. | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 170 000 |
| 6. | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 165 000 |
| 7. | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 165 000 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | | |
| 8. | Աշխատակազմի քարտուղար | 1 | 245 000 |
| 9. | Գլխավոր մասնագետ | 1 | 215 000 |
| 10. | Առաջատար մասնագետ | 3 | 190 000 |
| 11. | Առաջին կարգի մասնագետ | 2 | 132 000 |
| 12. | Երկրորդ կարգի մասնագետ | 6 | 93 000 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | | |
| 13. | Վարորդ | 1 | 165 000 |
| 14. | Վարորդ | 1 | 130 000 |
| 15. | Վարորդ | 1 | 115 000 |
| 16. | Էլեկտրիկ | 1 | 170 000 |
| 17. | Բանվոր | 1 | 115 000 |
| 18. | Բանվոր | 2 | 93 000 |
| 19. | Հավաքարար | 3 | 93 000 |
| Ընդամենը հաստիքային միավոր | | 33 | |

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ԲԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 57-Ա

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՊԱՐՏԵԶ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԿԱ-Ի ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով <<Պարտեզ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի <<բ>> ենթակետը՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1.Սահմանել <<Պարտեզ>>մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծնողական վճարի չափը յուրաքանչյուր երեխայի համար ամսեկան 3000 /երեք հազար/ << դրամ:

2.Ուժը կորցրած ճանաչել ավագանու 2015 թվականի ապրիլի 01-ի << <<Պարտեզ>> նախադպրոցական ուսումնական համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծնողական վճարի չափը սահմանելու մասին>> թիվ 14-Ա որոշումը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 58-Ա

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՊԱՐՏԵԶ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով՝

**ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄՅԱՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հաստատել <<Պարտեզ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի <<Սարչապետ համայնքի <<Պարտեզ>> մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենի վարձատրության չափի, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 15-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՁԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հավելված
Հաստատված է
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ
համայնքի ավագանու
2019թ. դեկտեմբերի 24-ի թիվ 58-Ա որոշմամբ

## Սարչապետ համայնքի <<Պարտեզ>> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը /դրույք/ | Ամսեկան պաշտոնային դրույքաչափը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|
| 1. | *Տնօրեն* | 1 | 130 000 |
| 2. | *Դաստիարակ* | 1.12 | 100 000 |
| 3. | *Դաստիարակի օգնական* | 1 | 93 000 |
| 4. | *Հաշվապահ* | 0.5 | 93 000 |
| 5. | *Խոհարար* | 1 | 93 000 |
| 6. | *Հավաքարար* | 0.5 | 93 000 |

Աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Մարտիրոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 59-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

*ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՀԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 60-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2020 թվականի բյուջեն՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 61-Ա

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ <<ՊԱՐՏԵԶ >> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 32-րդ մասով՝

*ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել Սարչապետ համայնքի սեփականության և նրա ենթակայության <<Պարտեզ>> մանկապարտեզի 2019թ. նոյեմբերի 15-ից նոյեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում հաշվառված գույքի ապրանքանյութական արժեքների ցուցակները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 62-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կամավոր խնդիրները դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

*ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՀԱՅԿԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 24-ի N62-Ա որոշման

## ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Բոնդարևա Ալեքսանդրա Միխայլովնա (գ.Սարչապետ)-20 000 (քսան հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
2. Մարդոյան Էմմա Երվանդի (գ.Սարչապետ)-40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
3. Մակարյան Սուսաննա Ժորայի (գ.Պրիվոլնոյե)-20 000 (քսան հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
4. Դավոյան Արմինե Սեմյոնի (գ.Պրիվոլնոյե)- 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
5. Դադյան Գայանե Գուրգենի (գ.Ապավեն)-50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
6. Գևորգյան Կարինե Գուրգենի (գ.Ապավեն)-30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
7. Ավանյան Քսենյա Գեորգիի (գ.Պրիվոլնոյե)-30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
8. Իսունց Ռազմիկ Հովհաննեսի (գ.Պրիվոլնոյե)-20 000 (քսան հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն),
9. Փնջոյան Զինաիդա Վարազդատի (գ.Գոգավան)-40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն):

**Ընդամենը՝ 290 000 (երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ:**

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

(ստորագրություն)

ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ
ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 63-Ա

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածով և համաձայն ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի թիվ 06-Ն որոշման կարգի՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1.Խորհրդակցական մարմինների (ԽՄ) կազմում ընդգրկվող ավագանու անդամների թիվը սահմանել երեք և ԽՄ-ների անհատական կազմերում ընդգրկել ավագանու հետևյալ անդամներին՝

1) Գևորգ Դավթյան

2) Վերչալույս Փնջոյան

3) Մկրտիչ Գինոյան

2. Ստեղծել Սարչապետ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններ հետևյալ կազմերով.

2.1. Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման ԽՄ՝

1) Սվետլանա Բարսեղյան՝ առաջատար մասնագետ-ԽՄ-ի նախագահ,

2) Նադյա Բարոյան՝ համայնքի ղեկավարի օգնական-ԽՄ-ի քարտուղար,

3) Մկրտիչ Գինոյան՝ ավագանու անդամ-ԽՄ-ի անդամ,

4) Հովհաննես Խաչատուրյան՝վարչական ղեկավար-ԽՄ-ի անդամ,

5) Ստեփան Ավետյան՝ 1-ին կարգի մասնագետ-ԽՄ-ի անդամ,

6) Խաչիկ Էգնատոսյան՝ վարչական ղեկավար-ԽՄ-ի անդամ,

7) Վոլոդյա Մարդոյան՝ համայնքի բնակիչ, ԽՄ-ի անդամ,

2.2. Քաղաքաշինության, հողօգտագործման, տնտեսական ենթակառուցվածքների, կոմունալ տնտեսության, շրջակա միջավայրի պաշտպանության և տրանսպորտի հարցերի ԽՄ՝

1) Վոլոդիա Հազոյան՝համայնքի ղեկավարի օգնական-ԽՄ-ի նախագահ,

2) Անժելա Մարտիրոսյան՝ աշխատակազմի քարտուղար -ԽՄ-ի քարտուղար,

3) Գևորգ Դավթյան՝ ավագանու անդամ-ԽՄ-ի անդամ,

4) Արմեն Բաղդասարյան՝վարչական ղեկավար-ԽՄ-ի անդամ,

5) Աշոտ Մկրտչյան՝ 2-րդ կարգի մասնագետ-ԽՄ-ի անդամ,

6) Արա Բաղդասարյան՝ համայնքի բնակիչ-ԽՄ-ի անդամ,

7) Նորայր Տոմեյան՝ համայնքի բնակիչ, ԽՄ-ի անդամ,

2.3. Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի ԽՄ՝

1) Արփինե Դավթյան՝առաջատար մասնագետ-ԽՄ-ի նախագահ,

2) Շուշան Տոմեյան՝ 1-ին կարգի մասնագետ -ԽՄ-ի քարտուղար,

3) Վերչալույս Փնջոյան՝ ավագանու անդամ-ԽՄ-ի անդամ,

4) Անժելա Մուկուչյան՝վարչական ղեկավար-ԽՄ-ի անդամ,

5) Կարինա Կագրամանովա՝ 2-րդ կարգի մասնագետ-ԽՄ-ի անդամ,

6) Նարինե Բարսեղյան՝ համայնքի բուժքույր-ԽՄ-ի անդամ,

7) Արմինե Տոմեյան՝ մանկապարտեզի տնօրեն, ԽՄ-ի անդամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՋԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 64-Ա

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով 2019 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում ստացած 3 (երեք) հողակտորների վկայականները՝

*ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Հաստատել Սարչապետ համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՔԱՎԵՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Սարչապետ
համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի 24 -ի թիվ 64-Ա որոշման

| Հ/Հ | ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ | ՀՈՂԱՏԵՍՔԸ | ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԸ/ՀԱ |
|---|---|---|---|
| 1 | 06-091-0144-0024 | վարելահող | 0.6277 |
| 2 | 06-091-0144-0095 | վարելահող | 0.2821 |
| 3 | 06-100-0125-0338 | խոտհարք | 0.5845 |
| 4 | | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Մարտիրոսյան